

Կուտակային ժամկետային ավանդ

Կարևոր տեղեկություններ

Կուտակային ավանդի հաշիվը բացվում է անվճար և ենթակա չէ սպասարկման վճարների գանձման ավանդի պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

Ձեր ավանդի հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ սահմանաչափերը՝

- Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ՝ **10 միլիոն ՀՀ դրամ**
- Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ՝ **5 միլիոն ՀՀ դրամ**
- Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը գերազանցում է 5 միլիոն դրամը՝ **10 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
- Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է՝ **5 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Վեճերի լուծման կարգը*

Բանկը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցել 250,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարը չի գերազանցել 500,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

* Կուտակային ավանդի հաշվին ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները տվյալ Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրին համապատասխան:

Թարմացվել է՝ 16/01/2019 15:00